



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ օտո օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցզովով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻՒՆ

Վստահութիւն ձեռք բերէք. ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ռուսաստանի անտառնե-
րը. նամակ երեւանից. նամակ Սոփիայից. նա-
մակ Խմբագրութեան. ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—
Հեռագրութիւն.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատմական հին աղբիւրներ:

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԶԵՌԻ ԲԵՐԷՔ

Կառավարութիւնը մի խոշոր գումար,
այն է 110,000 ռուբլի է տուել Մօսկովա-
յի գիւղատնտեսական ընկերութեանը այն
նպատակով, որպէս զի այդ ընկերութիւնը
մի շարք միջոցներ ձեռք առնի բարեօրե-
լու գիւղական անասնապահութիւնը: Կա-
ռավարութիւնը փոխադրել է այդ գումար
էն լուրջ գործը յանձնել մի ընկերութեան
թեան, որովհետեւ վերջինս տարիների ըն-
թացքում ապացուցել է, որ ընդունակ է
գործնական ծրագրերը մշակելու եւ նը-
րանց իրագործութեան համար պայման-
ներ կազմակերպելու:

Դա առաջին օրինակն է, որ մի այդպի-
սի խոշոր գումար տրվում է գիւղատնտե-
սական հիմնարկութեան Ռուսաստանում:
Անկասկած առաջին աշոգ փորձից յետոյ
կառավարութիւնը ամենայն վստահու-
թեամբ կը տայ երկրորդը, երրորդը նպատե-
լ է կը սկսէ հաստատ յոյս դնել ընկերու-
թեան վրա, ճանաչելով նրան իբրեւ աշա-
կից եւ օգնական մի մարմին:

Ինչպէս մեր կովկասեան Գիւղատնտեսա-
կան ընկերութիւնը չէ աշխատում ձեռք
բերել այդ տեսակ մի վստահութիւն: Ան-
ցեալում մեզ յայտնի են դէպքեր, երբ ըն-
կերութեան մի որոշ շրջան, երբ նրա գոր-
ծողների մի որոշ շրջան կարողացել է
ընկերութեան անունը բարձրացնել եւ նը-
րա վրա գրաւել միջնորդութեան ուշա-
դրութիւնը: Պէտք է խոստովանել, որ
վերջին տարիները ընկերութիւնը ընած
փրճակի մէջ էր եւ կորցրել հասարակու-
թեան առջ իր հեղինակութիւնը: Մինչ-
դեռ կառավարութիւնը ներկայումս որո-
նում է աշակիցներ եւ կը տար մեծ նպատե-
ներ նոյնպէս մեր ընկերութեան եւ նոյն
նպատակներին համար, ինչպէս որ նա
տուեց Մօսկովայի ընկերութեան, որովհե-
տեւ անասնապահութեան զարգացումը
ներկայումս հերթական հարցերից մէկն է
Ռուսաստանում եւ կառավարութիւնը
պատրաստ է նոյն իսկ միջոցներ տալ այդ
գործին համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՆ ԱՂԲԻՒՆԵՐ

«Մշակի» 72 համարում տպւած Արեւտակէս
Եպիսկոպոս Սեդրակեանի նամակն առիթով
անօգուտ չեմ համարում մի քանի խօսք առել:
Արդարեւ, Պարսկաստանի զանազան դիւ-
նասերները եւ զանազանները, մանաւանդ
զանազան սրբարանների գրասենյակում պահ-
պանված են եղել բազմաթիւ գրաւոր յիշա-
տակարաններ եւ պատմական տարեգրութիւն-
ներ, որոնց մէջ շատ թանգագին եւ մեզ դեռ
անյայտ մնացած տեղեկութիւններ կային ոչ
միայն Կովկասի, այլ եւ Հայաստանի մասին:
Այդ յիշատակարանների եւ տարեգրութիւննե-
րի մեծ մասը անհետացել եւ փչացել է այն
բազմաթիւ յեղափոխութիւնների եւ խռովու-
թիւնների ժամանակ, որոնց անդադար ենթա-
կայ է եղել Պարսկաստանը զանազան աշխար-
հակայնների եւ բռնապետների ժամանակ. սա-
կայն Հնդկաստանի մէջ վաղուց բնակութիւն
հաստատած ինտելիգենտ պարսիկների, մասնա-

թող մեր Գիւղատնտեսական ընկերու-
թիւնը օգտվի իր ցուցահանդէսից եւ
համակովկասեան ժողովներից վերականգ-
նելու իր հեղինակութիւնը եւ ապացուցա-
նելու, որ նա ընդունակ է ստանձնելու
լուրջ եւ պատասխանատու գործեր իր
վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Բազմապէս» ամսագիրը կանգ է առնում բժ-
շ. Արծրունու ժողովրդական բրոշյուրների մա-
սին մեր գրած մի յօդուածի վրա, որով մենք
հրաւիրում էինք օգնել այդ բրոշյուրների հրա-
տարակութեան: Ահա ինչ է ասում ամսագիրը.

Լրագիրը («Մշակ») դարձեալ հարուստնե-
րուն կը դիմէ, որ ձեռք տան այդ օգտա-
կար գործին: Բայց ինչու միշտ եւ նոյն իսկ
ամենաօգտակար նպատակ մը համար կրեոս-
ներու դիմել: Վաղարշապատի մէջ հայու-
թեան սիրելի սիրտ մը կայ, ուր անընդատ
թափուէր են ու կը թափուէին շատ մը կրե-
ոսներու եւ միջակ կարողութեան տէր ան-
ձանց նուէրներն, շուրջ զանազան եւ պա-
րարտ կտակներն. անաչառ լրագրութիւնը
թող դարձէ այն հաստատութեան զուգը,
թող խաղաղանէ անոր տպարանին ժլատու-
թիւնը, մեղելութիւնը, անգործութիւնը. ին-
չու հոն չի տպագրուին ժողովրդեան կեն-
սական օգտին անհրաժեշտ կարեւոր գրքոյկ-
ներ: Ինչու գործու կտակները յուզել եւ ան-
գործները լծացնել թողու. ընտանգատու-
թեան մուրճը թող հարուածէ բարեբու-
կանութիւնը. թող հարուածէ անաչառու-
թեամբ:

Այս բոլորը ճիշտ է: Բայց գիտէ՞ «Բազմա-
պէսը», որ կան ապարդիւն պահանջներ եւ դը-
րանց անդադար կրկնել անտեսվում է ճշու-
թեմեք: Վաղարշապատի մէջ եղած հայութեան
սիրելի սիրտը տարիներից ի վեր ամեն միջոց
գործ էր դնում, որ ապացուցանէ, թէ իր վե-
րաբերմամբ որ եւ է բարի ցանկութիւն յայտ-
նելը զուր տեղից ջուր ծնել է: Եւ ինչ կա-
րող ենք անել մենք, երբ այդ բանը ճիշտ որ
այդպէս է: Անցեալներում «հայութեան սիրելի
սիրտը» պարծենում էր, որ ունի մի մեծ եւ
բարեկարգ տպարան, որի նմանը բոլորէ իր
մի ուրիշ քաղաքում: Բայց երբ այդ տպա-
րանը մանր մուկը բանկներ է տպում, որպէս
զի արդենք ստանայ ապահով ճանապարհով
եւ մեծած ու անգործ է մնում ժողովրդի հա-
մար, ինչ կարող ենք անել: Հօ գիտէ «Բազմա-
պէսը» խմբագրութիւնը, թէ ինչ բան է մի Աս-
տուածաշունչ տպել: Վեներիկի վանքը երեք
անգամ տպագրել է այդ գիրքը առանց աղ-
մուկների, առանց կուրծք ծեծելու: Այժմ էջ-
միածնի տպարանն է ձեռնարկել այդ գործին:

անդ մովպետների (Հնդկաստանի գեբը պար-
սիկների կրօնաւորները) հետադասութեան չը-
նորհիւ հնութեան այդ թանգագին յիշատա-
կարանները, հետզհետեւ երեւան գալով փոշինե-
րի տակից եւ զանազան անկիւններից, այսօր
ոչ միայն զարգարում են Եւրոպայի նշանաւոր
միւզէնների գրադարանները, այլ եւ Պարսկա-
ստանի եւ նրան յարակից երկրների—Հայաս-
տանի եւ Վրաստանի պատմութեան ուսում-
նասիրութեան համար անգին նիւթեր են
հայտնութեամբ:

Այդ գրքերը յիշատակարանների մեծ մասը
հրատարակված է այժմ Կալիպոպոյի եւ Բոմ-
բէյի տպագրութեամբ: Սեդրակեան Եպիսկոպոսի
յիշած ձեռագիրն եւս, որ կոչվում է «Շէրէֆ-
Դին», տպագրված է ոչ միայն Հնդկաստա-
նում, այլ եւ Թէհրանում, միայն մի քանի
տարի առաջ: Այս օրերս իմ ձեռքս անցաւ
նրա մի գեղեցիկ եւ պարսկական հին մօզաիկ
նկարներով զարդարված ձեռագիր օրինակը:
Այդ գիրքը, որի հեղինակն է «Շէրէֆ-Դին»
Ալի, վաղուց յայտնի էր, թէ եւ իբրեւ ձեռա-
գիր, եւ օրագրական գիտնականներին եւ դեռ
1876 թւին ֆրանսիացի Շալվանը նրա հիման
վրա հրատարակեց Տուր քաղաքում Թամէր-
լանի, կամ ինչպէս արեւելեան պատմագիրներն

բայց ինչպէս. կօնգալներ են թուում աշխար-
հի բոլոր անկիւնները, փողեր են հնչում,
դրամ են հաւաքում եւ ներբողում են այդ մե-
ծագործութիւնը: Հրատարակչական ինչ գործ
պահանջն այդ տեսակ մի հիմնարկութիւնից:
Բայց թողնենք, այդ հարցը: Հաստատ գիտե՞
«Բազմապէսը», թէ էլ միածնը այնքան հա-
րուստ է: Մենք չը գիտենք, մենք միշտ մու-
րացկանութիւն ենք տեսնում էլ միածնից: Փոր-
ձեցինք մի անգամ հասկանել, որ լաւ կը լինի
հաշիւ տալ հաւատարկութեան, որպէս զի իմաց-
վին կարիքները, պակասութիւնները: Բայց մեզ
պատասխանեցին, թէ որդին հօրից հաշիւ պա-
հանջելու իրաւունք չունի: Եւ այսպէս, որդու
ու հօր մէջ կատարեալ անյայտութիւն: Որդին
ասում է. ինչ ունէք, ինչ չունէք: Բայց լսում
է միտաւսակ պատասխան. «Քարայ, փարայ»:

«Բազմապէս» այդ յօդուածին կարծես պա-
տասխանելու նպատակով է էլ միածնի «Արա-
րատը» ապագրել մի յօդուած, որի մէջ ապա-
ցուցանում է, թէ էլ միածնը պիտի դառնայ
բարեգործութեան կենտրոն: Շատ լաւ, շատ
համակրելի միտք: Բայց էլ ինչու չէ դառնում
—Հայ ազգը փող չէ տալիս, պատասխանում է
պաշտօնական օրգանը: Ինչու չէ տալիս—այս
մասին ոչինչ չէ ասված կամ ասված է շատ
քիչ բան: Մինչդեռ իրողութիւն է, որ էլ միա-
ծնը նախ քան բարեգործութեան կենտրոն
դառնալը պիտի բարեկարգութեան կենտրոն
դառնայ: Այդ ժամանակ ամեն ինչ կը լինի. եւ՝
վստահութիւն, եւ՝ բարի կամք, եւ՝ պատրաս-
տակամութիւն: Եւ իբրեւ ամսագիրը «Արա-
րական տնտես հերթաներ» խնդրում է չասել,
թէ ապիկարութիւնն է պատճառ, որ էլ միածնը
ոչինչ չէ կարողանում անել: Իրանը, հատու-
ապատեմաբանները շատ լաւ գիտեն, որ իրանց
ապիկարութիւնը նոր չը պէտք է ապացուցա-
նել: Ուր չը կայ գործի օէր, ուր մարդը չէ
հաւատում իր կոչմանը, չէ կարողանում զըր-
կանք կրել յանուն զաղափարի, այլ բաւակա-
նանում է պաշտօնական ծիսակատարութեամբ,
հրապարակային շողորմութիւններով—այն-
տեղ ոչինչ չի լինի, թէ կուզ միջոցներ էլ կու-
տէ: Փոքր բաների մէջ կարողացել էք ցոյց
տալ բարեխղճութիւն, օրինաւորութիւն, աղ-
նուկութիւն, որպէս զի իրաւունք ունենաք խօսել
մեծ բաների մասին—Ոչ, կանանք մենք, Կիրովի
ազգերը վերջ ի վերջոյ միայն ինչի պէտքական
եղան:—Կաթնային եւ ուրիշ ոչ մի բանի...

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Անտառային դեպարտամենտի վերջին տարե-
կան հաշիւ մէջ բերված են մի քանի տեղեկու-
թիւններ եւ Կովկասի մասին: Կովկասում
անտառների ընդհանուր հրապարակը, որը գը-

են կոչում, ընթերցելու Գուրգանի» կեն-
սագրութիւնը, իսկ անցեալ դարի առաջին կի-
սում ֆրանսիացի գիտնական Pétis de la Croix
հրատարակեց ամբողջ թարգմանութիւնը:

Արեւմտեան եպիսկոպոսը ցանկութիւն է յայտ-
նում, որ էմիր-Թէմուրը գիրքը թարգմանվի
գտնէ քաղաւածօրէն հայերէն: Դեռ 1842 թը-
ւին, թիֆլիսցիներին լաւ ծանօթ, այժմ հան-
գուցեալ Գալուստ Շերմազանեանց, ձեռք
բերելով «Շէրէֆ-Դին» մի ձեռագիրը, թարգ-
մանել էր ամբողջութեամբ հայերէն եւ, որ-
քան գիտենք մենք, թէ ձեռագիրը եւ թէ
նրա հայերէն թարգմանութիւնը գտնվում են
այժմ Միլեթիցիկ արքեպիսկոպոս Մուրադեա-
նի մօտ:

Կարգալով Շէրէֆ-Դինի պատմութիւնը, ինչ-
պէս եւ պ. Շալվանի հրատարակած կենսա-
գրութիւնը, որին իբրեւ աղբիւր ծառայել են
պարսիկ ուրիշ պատմագիրներ, ինչպէս Միր-
խոնդ, Արուստար, Ֆադլալա, մենք կը
տեսնենք, որ արդարեւ—ինչպէս նկատում է
Սեդրակեան Եպիսկոպոսը—Լանկթամուրը եւ
Չինգիս-խանը մեր պատմիչների նկարագրած
արեւմտաւարտ հրէշները են, այլ աշխարհա-
կաններ, որոնք անհեղինակ են իրանց որոշ աշ-
խարհայեացքը, քաղաքականութիւնը եւ կա-

տրվում է կառավարչական հսկողութեան
տակ, 4,9 միլիոն դեսեատին է. դրանցից 3,1
միլիոնը արքունական անվիճելի սեփականու-
թիւն է, 1,6 միլիոնից մտադրութիւն կայ մա-
սեր հանել գիւղացիների համար, իսկ 0,2 մի-
լիոնի իրաւունքները դեռ վիճելի են, 4,9 միլի-
ոնից մէկ ու կէս միլիոնը անյարմար հողեր են
չանագործելու համար: Կովկասում անտառները
բաժանված են 87 անտառապետութիւնների եւ
նրանցից իւրաքանչիւրի վրա հսկում է առան-
ձին-առանձին անտառագետ:

Ինչ վերաբերում է ընդհանուր պետութեան
անտառներին, նրանց հրապարակը չափազանց
մեծ է—240 միլիոն դեսեատին: Նրանք այժմ
գլխաւորապէս բուսնում են երկրի հիւսիսում,
հիւսիս-արեւելքում, հիւսիս-արեւմուտքում եւ
մասնաւոր արեւելքում: Միլիոն անտառները
կազմում են պետութեան անտառների կէսը:
Առհասարակ այժմ անտառները կենտրոնացած
են այն տեղերում, ուր մարդիկ ապրում են
չափ քիչ թուով: Երկրի խիտ բնակեցրած տե-
ղերում անտառների ընդհանուր հրապարակը
առհասարակ չնչին է: Բացի հանրայայտի
պատճառներից, այդ հանգամանքը պէտք է
բացատրել եւ անտառատնտեսութեան անչա-
հաւատութեամբ: Ժողովրդական տնտեսութեան
մէջ չը կայ, կարծէք, մի այնպիսի ճիւղ, որը
այնքան անարդիւնաւէտ, անձեռնուր լինէր,
ինչպէս անտառների տնտեսութիւնն է ներկա-
յայնում: Գիւղական տնտեսութեան հետ հա-
մեմատած—անտառայինը 2, 5 նոյն իսկ 10 ան-
գամ անձեռնուր է, հէնց դրա համար էլ ան-
տառների տէրերը, մասնաւոր մասնաւոր տէ-
րերը, որոնք ընդհանուր նպատակներին շատ
քիչ են հետեւում, անմիջապէս կորաւորում են
իրանց անտառները այն տեղերում, ուր գիւ-
ղատնտեսական հողերի հրապարակը նկատում
են սահմանափակ: Իր բնաւորութեամբ ան-
տառային տնտեսութիւնը պատկանում է թոյլ
թմրած, էկստենսիվ տնտեսութիւնների թւին:

Բերենք հաշիւը եւ մի քանի ուրիշ տեղե-
կութիւններ: Կովկասում 1899 թւականին ըն-
թացքում պաշտօնապէս փայտ կտրատվել է 220
հազար սաճեակափ, այսինքն անտառների
տակից մերկացվել է մօտ 4500 դեսեատին:
Կովկասի, ինչպէս եւ ամբողջ պետութեան ան-
տառների ընդհանուր հրապարակը դեռ միշտ
որոշված չէ: Այսպէս, օրինակ, Կովկասի մի-
այն մի տասներորդականն է վերածած յատա-
կազմի, մնացած անտառների հրապարակը մօ-
տաւորապէս է որոշված: Տեղ-տեղ անտառները
ներկայացնում են այնպիսի չնչին անտեսակալ
արժողութիւն, որ կեսու չեն թողնարում որ
եւ է ծախս՝ նրանց բնածնաւորները համար:

Անտառային ինստիտուտում 1900 թւի յուն-
վարի 1-ին կար 471 ուսանող, որոնց մէջ 3

տարի են նաեւ նշանաւոր գործեր: Մի եւ
նոյն ժամանակ մենք կը համոզվենք, թէ ինչ
անագին կարեւորութիւն ունի պարսկական
գրաւոր աղբիւրների օւսումնասիրութիւնը Հա-
յաստանի եւ Վրաստանի պատմութեան հա-
մար 10-րդ դարից սկսած: Դեռ անցեալ տարի
Թէհրանում տպագրութեամբ հրատարակվեց 10
տարի առաջ գտնված մի ձեռագիր «Արաւսի»
վերնագրով: Դա Շահ-Աբբաս I-ի եւ նրա ա-
րած պատերազմների ու կատարած գործերի
պատմութիւնն է, բաղկացած աւելի քան հա-
զար մեծածաւալ էջերից: Նրա մէջ կան նա-
թանգագին տեղեկութիւններ եւ անյայտ մնա-
ցած պատմական դէպքեր Արաւստեան աշ-
խարհի, Վրաստանի եւ Խաւսայի մէջընթիւն-
ների մասին:

Այս վերջին երեք տարիների ընթացքում
եւ ուսումնասիրում էի պարսկական պատմա-
գիրները եւ առիթ ունեցաւ տեսնել հարուստ
պարսիկների գրադարաններում շատ կարեւոր
ձեռագիրներ, բայց արդէն նոյն իսկ տպված
աղբիւրները այնքան ճոխ եւ առատ նիւթ են
ընծայում, որ ես եւ ինձ հետ այդ աղբիւրնե-
րին նոյնպէս ծանօթ անձնեք, ինչպէս Մասե-
հեան եւ զօկաւոր թիւրաքան, համոզված ենք,
որ այդ աղբիւրների ուսումնասիրութիւնը,

հայ-լուսաւորչական եւ ոչ մի մահմէտական Պետական ծառայութեան մէջ հաշոււ էր 1900 թւի յունվարի 1-ին 3224 ծառայողներու Դրանցից 30-ը հայ լուսաւորչականներ էին, 18-ը մահմէտականներ, 15-ը հրէաներ, 198-ը լուսաւորչականներ, 518-ը կաթողիկոսներ Այդ թւերից մի որոշ մասը գտնուում էր մասնաւոր կալուածատէրերի մօտ, օգտուելով պետական ծառայութեան արտօնութիւններով Ռ'տեղ, պետութեան ինչ մասերում էին ծառայում այս կամ այն կրօնին պատկանողները—հաշիւը ոչինչ չէ ասում:

Դ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 13-ին

Բագուի դերասանական խմբի մի մասը, մասնակցութեամբ Խ. Սիրանոյի, մեր քաղաքային ժողովարանի դժու ընմը հետաքրքրութեան առարկայ է դարձրել ժյատ երեւանցի առատացել է, նրա սիրտը, նրա հոգին, նրա գգայնութիւնները խօսել են միմեկի:

Այսօր Խ. Սիրանոյի խումբը խաղաց Զուգերմանի «Հայրենական տուն» պիէսան: Զուգերման անձնանօթ չէ մեր հասարակութեան նրա «Պատիւ» պիէսան հասարակութիւնը տեսել է մի քանի անգամ: Այսօր էլ առաջին անգամ տեսնում է նրա մի այլ պիէսան: Որքան էլ մեր բեմը նեղ լինի նրա պիէսներին համար եւ որքան էլ մեր հասարակութիւնը ստոր կանգնած լինի Զուգերմանի չօշափած խնդիրները լուսաւորչական եւ բարձր-նկողնականները, այնուամենայնիւ մի կայծն էլ բաւական է խաւարի մէջ մի փոքրիկ լոյս առաջացնելու: Զուգերման չօշափում է ընտանեկան բարդ խնդիրներ, տոհմային, դասակարգային, ամուսնական եւ վերջապէս ապօրինի զուակնների հարցերը: Բիթէ մեր մէջ թիչ են այդպիսի հարցեր, միթէ մեր մէջ հայրը իր յաճառ հասկացողութեամբ չի աշխատում խեղդել իր որդիներաց մէջ նրանց ազատ կամքը, տեղի չեն ունենում ամուսնութիւններ՝ զանազան հայիւններ ի նկատի առած, եւ վերջապէս միթէ մեր մէջ թիչ են պատահում խաղված օրիորդներ, որոնք հասարակութեան դատաստանից խուսափելու համար սպանում կամ եկեղեցու բազերն են չարտում իրանց նորածին զուակին եւ յաճախ նոյն իսկ իրանց կեանքին վերջ դնում: Այն այս՝ հասարակութիւնից հայածված թշուառներին պաշտպանելու համար գրել է Զուգերման «Հայրենական տուն»-ը եւ ստեղծել Մագդայի տիպը, որը արհամարելով եւ բարձրացնելով թիւր հասկացողութիւն եւ հայրենական տունը, նոյն իսկ խաղող պետական խորհրդակցի առաջարկութիւնը՝ ամուսնութեան միջոցով վերականգնել ընկած պատիւը, գնում է իր մէջ խօսող մայրական սիրոյ յետեւից: Նա վճռում է ապրել եւ տանջվել միայն եւ միայն թէ եւ ապօրինի, բայց իր գաւաւի համար, նրան աշխարհի հալածանքից պաշտպանելու համար: Առաքելութիւն է չէ մի անպաշտպան էակի համար այդպիսի անձնագործութիւնը: Տարաբախտաբար մեր մէջ կան ստոր, խաղող երիտասարդներ, իսկ Մագդաներ—հի:

Գալով խաղին, մենք նոր բան ասած չենք լինի, եթէ գովենք Խ. Սիրանոյին: Նա խաղացել է Թիֆլիսի ու Բագուի բեմերի վրա եւ ընդունելութիւն գտել: Նրան մեր բեմի զարդն

մանաւանդ փէշլաւի եւ զենդ աղբիւրների ուսումնասիրութիւնը հիմնովին պէտք է յեղաշրջէ հայոց պատմութեան վիճակը եւ շատ հարցեր, որոնք այսօր մեզ համար մութ են մնացել եւ չը լուսաբանված, մանաւանդ մեր հին պատմագիրների եւ գլխաւորապէս Մովսէս Խորենացու մէջ, պէտք է լուսաբանվեն պարսիկ աղբիւրների ծանօթութեամբ:

Այսպէս, օրինակ, ուսումնասիրելով Դէսաթ ուրը, մենք կը տեսնենք, թէ ինչու քրոջ հետ ամուսնանալու սովորութիւնը Հայաստանում դեռ երկար պահվում էր, այնպէս որ Շահապիւմի 5-րդ եկեղեցական ժողովը ստիպված էր յատուկ կանոնով արգելել այդ արեւնախոսական ամուսնութիւնը:

Ուսումնասիրելով զենդ եւ փէշլաւի աղբիւրները, մենք կարող ենք վերականգնել հին, հեթանոսական Հայաստանի ժողովրդի սովորութիւնները, հաւատալիքը, նախապաշարումները եւ, որ գլխաւորապէս, մենք պարզ կը տեսնենք, թէ ինչ սերտ կապ կայ մեր հին գրաւար լեզուի եւ փէշլաւի լեզուի մէջ: Դոկտոր Թիքեաքեան, որ այժմ մասնաւորապէս ուսումնասիրում է զենդ եւ փէշլաւի լեզուները, միանգամայն հիացած է ուսումնասիրութեան հետեւանքները տեսնելով: Նա նորերումս ցոյց

են համարում եւ իսկապէս նա արժանի է այդ պատիւին: Մի բան, որ նկատուում է Խ. Սիրանոյի մէջ, այդ այն է, որ երբեմն շտապ խօսելու ժամանակ տեղ տեղ բառեր արտասանում է ոչ պարզ կերպով: Վրոյը Շիֆարցի դերը կատարեց շատ լաւ: Պ. Պետրոսեան կատարում էր պատուրի դերը: Երկրորդական դերերը անցան շատ թոյլ, նոյն իսկ վատ, սիրողներին միմիայն օր: Զալայեան, որպէս օրիորդ, վատ չէր խաղում:

Մի բան, որը շատ փնտում էր խաղին, այդ դարձնում տիրող անկարգութիւններն էին: Մեր հասարակութիւնը դեռ եւս չը գիտէ իրան պահել այդպիսի տեղերում: Ներկայացման ժամանակ խօսակցութիւն, անտեղի ծիծաղ սովորական երեւոյթներ են: Ներկայացումն արդէն սկսված՝ շատերը նոր ներս են մտնում դահլիճ ու ներկայացումը խանգարում: Քիչ չեն թուլացնում խաղի տպաւորութիւնը նաեւ բեմի ետեւից չարժիւղ եւ երեւացող մարդիկ:

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ՍՆՆԱԽԻՑ

Մայիսի 15-ին

Մայիսի 8-ին մեր նորակազմ գումայի նիստում քննվում էր մի հարց, որ պարզ գաղափար է տալիս, թէ որպիսի հայեացք ունեն ժողովրդական կրթութեան վրա մեր քաղաքի մեծ մասամբ երիտասարդ ներկայացուցիչները: Թիֆլիսի ժողովրդական դպրոցի տեսուչ պ. Պալլովի դիմով, որ քաղաքագլխին՝ առաջարկելով ազատել Լիանոզեանի կալուածքը, որի եւ կամուտով պահպանվում է Լիանոզեան դպրոցը, քաղաքային տարեգրից, որը տարեկան կազմում է 24 ռ., իսկ ապագիներ՝ 104 ռ.: Պ. տեսուչը իր առաջարկութիւնը պատճառաւորում էր նրանով, որ Լիանոզեան դպրոցը չքաւորութեան պատճառով անկարող էր վճարել քաղաքային տարեգր, յայտնելով որ բացասական զեպքում ստիպված կը լինեն աւելացնել թոյակը, որ ծանր կը լինի աղքատ ծնողների երեխաների համար: Ներկայումս այդ դպրոցում թոյակը 5 ռ. է, որ դժուարութեամբ են վճարում աշակերտները եւ նոյն իսկ շատերը դրա համար հեռանում են: Մեր դուման, փոխանակ այդ հարցին դրական կամ բացասական պատասխան տալու, դիմեց փաստաբանութեան թէ ունի է պատկանում այդ կալուածքը՝ դպրոցական իշխանութեան, հայոց եկեղեցուն: Թէ Լիանոզեանին եւ եկաւ այն եզրակացութեան, թէ հարկաւոր է պահանջել ժողովրդական դպրոցների տեսչից դոկումենտ, որով նա Լիանոզեանի տունը համարում էր դպրոցի սեփականութիւն, քանի որ վարչութեան մատենանիւմ այդ կալուածը նշանակված է Լիանոզեանի եւ հայոց եկեղեցու վրա: Այս կալուածը մօսկովայնակ Գ. Լիանոզեանի նուիրել էր Խ. Կարապետ եկեղեցուն այն պայմանով, որ դրա արդիւնքով պահպանվի նախկին հայոց եկեղեցական-ծխական դպրոցը եւ վերջինը կը իր անունը: Այդ կալուածը օրինական կերպով չէ հաստատված եկեղեցու վրա, միայն 1894 թ. հրատարակվեց Բարձրագոյն հրաման անուանել հայոց դպրոցը Լիանոզեան:

Խճճելով այս կերպով այդ հարցը, մեր դուման անուղղակի կերպով հրաժարվում է նպատակը դպրոցին տարեկան 24 ռ. չնչին գումարով, որ առաջ կը բերէ թօշակի բարձրա-

տուեց ինձ, թէ ինչպէս փէշլաւի լեզուն բաժանալով, կարելի է գտնել այն ու քանի բաների եւ ոճերի ճիշդ իմաստն ու նշանակութիւնը, որոնք մինչեւ այսօր անհասկանալի եւ անմեկնելի են մնացած Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան եւ Եղնիկ Կողբացու «Շոքաղանդ»-ի մէջ: Բերենք մի օրինակ: զենդ աղբիւրների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հին Ռուսը, գրադաշտեան կրօնը ընդունելուց առաջ, հաւատում էր լուսաւոր էակներին, հրեշտակների գոյութեան, որոնց անուանում էր դիւ: Զրադաշտը, երբ հիմնեց մազդեզանց կրօնը, կամենալով ասել տալ իրանցիներին իրանց հին հաւատ-վիքը, քաղաքից, թէ դիւ է չարի սկզբունքն է, Ահրիմանի ծնունդը: այդպէս էլ հաստատվեց եւ դիւ բառը ստացաւ հակառակ իմաստ: Նոյնը եւ հայերի մէջ այդ բառը դարձաւ դիւ, դեւ եւ գործածվեց չարի սկզբունքի, սատանայի իմաստով: Սակայն այդ բառը պահպնեց հայ լեզուի մէջ եւ իր նախկին իմաստով, երբ արտայայտում էր լոյսի սկզբունքը, այն է տիւ (օր, ցերեկ) բառը եւ այդ ցոյց է տալիս, որ հին հայերը, իբրեւ իրանցիներ, գուցէ նոյնպէս դաւանում էին մահապետեան (նախա-գրադաշտական) լիւրը, որի հիմնադիրը համարվում է Մահ-Արադը: Նոյն

ցումը: Արդէն հաղորդել էինք, որ դպրոցի վարչութիւնը վճռեց միգրանտ Լիանոզեանի դպրոցը վերածել երկրպագների, կամենալով արանով հնարաւորութիւն տալ աղքատ ծնողների զուակներին մի տարով աւելի ուսում ստանալ, իր վրա առնելով ուսման չարչարանքը: միացնելով առանձին բաժանմունքները ի գէպ, այստեղ անհրաժեշտ ենք համարում առաջ բերել վիճակագրական տեղեկութիւններ Սըղ-նախի կրթական գործի մասին:

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի 1899 թ. հրատարակած հաշիւից երեւում է, որ այդ թւին Սըղնախի քաղաքային ուսումնարանում ուսանելիս են եղել 273 աշակերտներ, Մարիխսկի իգական դպրոցում՝ 134 աշակերտուհիներ եւ Լիանոզեան խառն դպրոցում 87 երեխաներ, ընդամենը երեւ ուսումնարանում՝ 494 երկու սեռի սաներ: Այդ հաշիւից երեւում է, որ մօտ 100 աշակերտներ գիւղացիք են, ուրեմն Սըղնախ տալիս է երեք ուսումնարանին մօտ 400 աշակերտ: Սըղնախում կայ մօտ 2000 ծուխ: Հաշիւով ամեն մի ծխի վրա միջին թւով թէկուզ մէկ ուսուցանելու երեխայ, դուրս է գալիս, որ Սըղնախ պէտք է ուսումնարաններին տալ մօտ 2000 երեխայ, մինչդեռ նա տալիս է 400 երեխայ: ուրիշ խօսքերով, մասնակների մօտ 80% զուրկ է մնում հասարակ գրագիտութիւնից անգամ: Դպրոցների պահպանութեան համար կառավարութիւնը տալիս է քաղաքային դպրոցին տարեկան 4760 ռ., Մարիխսկի դպրոցին՝ 1500 ռ.: Քաղաքը Մարիխսկի դպրոցին տալիս է տարեկան 600 ռ., իսկ քաղաքային դպրոցին քաղաքային տունը զիջւում է 600 ռ. տան վարձն առնելով, մինչդեռ նա արժէ տարեկան մօտ 1000 ռ., ուրեմն մեր քաղաքը ժողովրդական կրթութեան վրա ծախսում է տարեկան (այն էլ ներկայ տարվանից) 600 ռ., մի գումար, որից աւելի կրթութեան համար ծախսում են հասարակ գիւղերից շատերը: Դպրոցների մնացած ծախսը ծածկվում է թոշակից: Մասաւայի մէջ գրագիտութիւն տարածելու համար անհրաժեշտ են էժանագին, նոյն իսկ ձրի տարրական ուսումնարանները եւ զանի որ քաղաքը անձամբ անկարող է սեփական ուսումնարաններ բանալ, նա պարտաւոր է հնարաւորութեան չափ հոգա քաշել ժողովրդի կրթութեան մասին: Յանկալի է, որ մեր ձայնաւորները ուրիշ անգամ այսպիսի հարցերում լուրջ ուսումնասիրեն այս հարցը եւ ապա վճիռ արձակեն:

Յ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, մայիսի 10-ին

Թիֆլիսի հասարակութիւնը ապրիլի 30-ին ականատես էր մեր աղբարդ տաղանդաւոր դրամատուրգ Գարբիէլ Սունդուկեանի յօթնութեան:

Այդ ուրախալի երեւոյթը ապացուցանում է, որ հասարակութիւնը գիտէ գնահատել իր արժանաւոր գործիչներին: Բայց ժամանակ չէ արդեօք, որ հայ հասարակութիւնը մի շօշափելի գործով յանգնեցնէ Գարբիէլ Սունդուկեանի անունը: Կարելի է թատրոնական մի ֆօնդ կազմել մշտական մի լաւ կանօնաւոր խումբ ունենալու համար Թիֆլիսի եւ այլ քաղաքների համար: Ֆօնդի կազմակերպելը ինչի ոչ միայն ներկայացումներ տալ, այլ ուղարկել շնորհով երիտասարդներին մայրաքաղաքի թատրոնա-

նը եւ խաւար բառն է. հին պարսկերէնում այդ բառը նշանակում է արեւելք, իսկ այսօր Այնքերի մէջ մթնութեան իմաստն ունի:

Այնքերի է ուրեմն, որ հին պարսկական փէշլաւի եւ զենդ—աղբիւրների ուսումնասիրութիւնը հնագին լոյս կարող է տրել Հայաստանի հին պատմութեան, կրօնի, առասպելների եւ վէպերի ծագման վրա: Նոյնչափ կարեւոր է եւ նոր պարսիկ գրականութեան ուսումնասիրութիւնը Հայաստանի պատմութեան համար, մահմեդական տիրապետութիւնից յետոյ: Շատ մեծ հաւանականութիւն կայ, որ հին պարսկական աղբիւրների քննութիւնը կարողանայ երեւան հանել Մար-Աբաս Կատիրայի հարցը եւ լուծել նաեւ Մովսէս Խորենացու վերաբերմամբ ծագած վէճը:

Սակայն այդ ուսումնասիրութիւնը հեշտ գործ չէ: Նա պահանջում է երկար, սովորական աշխատութիւն, լեզուագիտական եւ գիտնական պատրաստութիւն եւ մի եւ նոյն ժամանակ հայերէնի խոր հմտութիւն: Անդրե՛ք աւելի լաւ չի լինի, չարունակ կրկնում է ինձ դոկտոր Թիքեաքեան, որ իջնաձիւնը, փոխանակ ուղարկելու իր երիտասարդ վարդապետներին աստուածաբանութիւն սովորելու Գերմանիայում, ուղարկէր նրանց յատկապէս ծանօթանալու

կան ուսումնարանները, պրեմիաներով խրախուսել նոր-նոր պիէսներ առաջ դառնալ եւ այլն:

Արժէ այդ մասին մտածել...

Դերասան Գ. Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, թէ Մարթա Թովմասեան Շեխնգուլայի ժառանգները ուզում են տիրանալ այն տանը, որ հանգուցեալը կտակել է Թանդոյան եկեղեցուն, այնպէս որ Թիֆլիսի կօնսիստորիան ստիպված է դատի դիմել:

Մօսկվայի համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցաւ համալսարանական խորհրդի ժողովը այն հարցերի քննութեան համար, որ առաջարկված էին խորհրդին ժողովրդական լուսաւորութեան միջնատրութեան կողմից համալսարանների բարենորոգման վերաբերմամբ: Վիճարանութիւնները ժողովում շատ տաք եւ աշխույժ էին: Գեղեցիկ ճառեր արտասանեցին պրօֆէսորներ Տիմիրեզով, Մենգերով եւ Գերիէ: Հարցերը քննվում էին կէտ առ կէտ: Քուէարկութեան առայժմ ենթարկվել է միայն առաջին կէտը, թէ արդեօք համալսարանի թէկտորը եւ դէկանները պէտք է ընտրովի լինեն թէ նշանակովի: Բոլոր ձայները մեծամասնութեամբ ընդգէմ մէկի վճովեց, որ թէկտորը եւ դէկանները պէտք է լինեն ընտրովի:

«Քյո. ՅՅԱ.» լրագրին հեռագրում են Բերլինից, թէ մօտ օրերումս Լէյպցիգում լոյս կը տեսնի կոմս Լեվ Տօլստոյի հեղինակութիւնների լիակատար ժողովածուի առաջին հատորը: Այդ ժողովածուի մէջ պէտք է մտնեն այն բոլոր գրութեանները, որ Տօլստոյ գրել է իր գրական գործունէութեան սկզբի օրերից մինչեւ վերջին օրերը:

Ներկադրութեան եւ պետական կալուածների միջնատրութեան մէջ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, հարց է բարձրացած հիմնելու Ռուսաստանի զանազան շրջաններում, ի միջի այլոց, նաեւ Կովկասում, մի քանի փորձական պողոտաւանական կայաններ այնպիսի անձանց ղեկավարութեամբ, որոնք հիմնաւորապէս ուսումնասիրել են բնական գիտութիւնները եւ լաւ ծանօթ են տեղական պայմաններին: Այդ տեսակ կայանները կունենան օրինակելի տնկարան, փորձական դաշտ՝ զանազան տեսակ սերմեր ցանելու համար եւ այնպիսի այգի, որի մէջ նախ կը փորձվեն եւ ապա կը տարածվեն ազգայնականութեան մէջ տեղական կիմալայական պայմաններին եւ տեղական շուկաների պահանջին համապատասխան պողոտաւան ծառեր եւ բոյսեր: Այս նպատակով փորձական պարտէզներ կը հիմնվեն ոչ միայն պողոտաւանական կայաններում, այլ եւ երկրագործութեան միջնատրութեան ուրիշ հիմնարկութիւններին կից:

«НОВОСТИ» լրագրում տպագրված է պրօֆէսոր Լէսնաֆօրի մշակած նախագիծը, ուսանողական կազմակերպութիւնների մասին ապագայ բարեփոխված համալսարաններում: Նախագիծն էական կէտերը հետեւեալներն են.— համալսարանի ուսանողները իրաւունք ունեն

առնակիրտ լեզուի եւ առհասարակ լեզուագիտութեան հետ եւ ապա ուղարկէր նրանց Պարսկաստան ու Հնդկաստան ուսումնասիրելու զէնդ, փէշլաւի եւ պարսիկ պատմական յիշատակարանները ու համեմատելու հայ աղբիւրների հետ, Թարգմանելու այդ յիշատակարանները, քաղելու նրանցից մեր պատմութեան համար կարեւոր տեղեկութիւնները: Բայց իջնաձիւնը, իր այժմեան կազմակերպութեամբ, ընդունակ է այդպիսի մի գաղափար յղանալու եւ իրագործելու: չենք կարծում: Մասնաւոր անձինք եւս անկարող են այդ գործը կատարել, նոյն իսկ նոր պարսկական աղբիւրները թարգմանել, որովհետեւ, նախ, բաւական մեծ դրամ պէտք է այդ աղբիւրները ձեռք բերելու, ի նկատի ունենալով, որ նրանց մեծ մասը ձեռագիր է, երկրորդ՝ Թարգմանութիւնը եւ հրատարակութիւնը նոյնպէս ահագին ծախք կը պահանջեն: Մեր հարուստ դասակարգի մէջ եւս դեռ չը կան այդ ուղղութեամբ մեկնաւորներ, հետեւաբար, դեռ երկար ժամանակ մեր պատմութիւնը եւ մեր ազգային լեզուի ուսումնասիրութիւնը պէտք է կուշ եկած մնան ազգային աւանդութիւնների եւ աղբիւրների մէջ:

Հ. Առաքելեան

կազմակերպելու առանձին ընկերակցություններ՝ միմեանց հետ չփոխելու եւ ապագայ հասարակական գործունեության նախապատրաստվելու նպատակով։ Ուսանողները կարող են ունենալ իրանց դատաստանը, գրադարանը, գրամարկը եւ սեղանատունը։ Իրանց գործերը կանոնադրապես տանելու համար՝ իւրաքանչիւր կուրսի ուսանողները ընտրում են մի-մի աւագ անկն մի 100 մարդու համար։ Աւագները վարում են կուրսի բոլոր գործերը եւ ի կատար են ածում կուրսային ժողովների բոլոր վճիռները։ Նրանք ներկայացուցիչներ են լինում կուրսի կողմից համալսարանական իշխանությունների առաջ։ Կազմակերպվում են կուրսային ուսանողական ժողովներ գիտնական նպատակներով եւ այդ ժողովները գումարվում են առնուազը չարաթիւ մի անգամ։ Ժողովներին ներկայ է լինում կուրսի դատաստաններից մէկը, որին կը նշանակէ ֆակուլտետը։ Աւագների ժողովները տեղի են ունենում այն ժամանակ, երբ այդպիսի ժողովների կարիք է զգացվում, յամենայն դէպս ոչ ուշ քան ամիսը մի անգամ։ Ֆակուլտետի թղթովները նախօրոք ստանալուց յետոյ ուսանողները կարող են հրաւիրել ֆակուլտետային ընդհանուր ժողովներ։ Թէ աւագների, թէ կուրսային եւ թէ ֆակուլտետային ժողովների ժամանակ պէտք է ներկայ լինեն ներկայացուցիչներ կուրսի, ֆակուլտետի կամ համալսարանական խորհրդի կողմից։

Առաջիկայ աշնանը, ինչպէս հաջորդում են Պետերբուրգի լրագիրները, հաղորդակցութեան ճանապարհների մէջ կը քննվի բանուորական օրը կայարանական ծառայողներին համար օրէնսդրական կարգով կանոնաորոշելու հարցը։

ԲԱՍՏՈՒՄԻՑ մեզ գրում են. «Բեռնատուներն է... գործերը շատ թոյլ են ընթանում, փող չը կայ, ախտատնը չը կայ... Գործարաններում աշխատող գործադատարները պարագայութեանից ձանձրացել են, իսկ երկրորդների շատերը պարագայ ժամանակը ունեցած չունեցածները կերել, պրծել են եւ այժմ առանց կոպէկի, աչքները յտառած, սպառում են գործի։ Անգործ բանուորներն մեծ թիւ են կազմում Ախալքալաքի թաղամասում գիւղացիները, որոնք դռնէ դռն ընկած, փողոցէ փողոց ժողովաւում են եւ գործ խնդրում։ Ուղիղ է, թէ եւ այստեղ կարիքը միլիոններն չէ հասնում եւ Լաւրաքանան զէպքեր շատ յաճախ չեն կրկնվում, ինչպէս որ Բաքում, բայց գործերի ընդհանուր թիւովներն էլ մի շատ մեծ հարուած է այս նոր մտղկող քաղաքի համար։ Մի երկու ամիս առաջ այստեղ գործարանները շատ աջող կերպով էին բանում։ Կարապ մարդ չը կար, ամեն մարդ գոհ եւ ուրախ էր։ Ուրախ էին եւ մեր գաւառացի բանուորները։ Բայց ահա անսպասելի կերպով նախքան գնալ իշան, շատ գործարաններէր, թանգը գնով գնած եւ ամբարած լինելով մեծ քանակութեամբ նաւթ, գների յանկարծակի փոփոխութեամբ, զգալի կերպով վնասվեցին։ Հիմի էլ թէ եւ կան գործարաններ, որոնք աշխատում են, բայց ոչ ամբողջ օրով, այլ 1/4 կամ 1/2 օր միայն, այն էլ ոչ թէ գործ առաջ տանելու համար, այլ, ինչպէս իրանք են ասում, բանուորների լիաթը չափելու, նրանց «պաշտպանելու», որ դէս ու դէն չը ցրվին, իսկ յետոյ, երբ գործ բացվի, բանուորների պակասութիւնը չը կրեն։ Եթէ ներկայ դրութիւնը երկու շաբաթանակվի, հաւանական է, որ մեր առեւտրականներից շատերը իսկական կերպով անանկանան։ Իսկական ենք ասում, որովհետեւ վերջին տարիներս անանկանանալը մօզա է դարձել եւ վարակիչ յատկութիւն ունի... Ժաշաւանդ մեր խանութները շատ շուտ են վաճակվում այդ ախտով։

ՂԱՐՍՈՒՑ մեզ ուղարկած է 60 րուրի, որ հաւաքել են մի խումբ համակրող երիտասարդներ բժշկապետ Վ. Արծրունու ժողովրդական հանրամատչելի բժշկական բրօշուրների հրատարակութեան նպատակով։ Համար Այդ գուժարը մենք յանձնեցինք պ. Արծրունուն։

ՍՂՆԱՍԻՑ մեզ գրում են. «Անցեալները մի քանի երիտասարդներ ներկայացան Արշալիս գործակալին եւ պահանջեցին, որ երէցփոխների ընտրութիւնն նշանակէ այն եկեղեցիներում, որտեղ երէցփոխի պաշտօնավարութեան օրինական եռամեայ ժամանակամիջոցը լրացել է արդէն թէ քաղաքում եւ թէ գիւղերում։ Երիտասարդները նոյնպէս պահանջեցին, որ բոլոր երէցփոխները հրապարակական հաշիւ տան ծխակալներին օրէնքի համաձայն։ Գործակալը խոստացաւ կատարել երիտասարդների այս

պահանջները։ Բարեկարգութիւնը պէտք է սկսվի ա. Գէորգ եկեղեցուց։ Ցանկալի է, որ այս խոստումները չուտով կատարվեն։

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Քաղաքում մի խումբ երիտասարդների մէջ միտք է յղացել կազմակերպելու մի ընկերակցութիւն որոշ կանոնադրութեամբ, որի նպատակը լինելու է կուել արեւելոցութեան, անառակութեան եւ զանազան ժողովրդական վնասակար ախտերի դէմ։ Շատ դանկալի է, որ քաղաքի երիտասարդները անխոր բոլորն էլ մասնակցէին եւ աջակցութիւն ցոյց տային այդ համակրելի եւ դանկալի մտքին։ Ի սրտէս դանկալում ենք աջակցութիւն։

ԱՆԱԼՔԱՒԱՔԻՑ մեզ գրում են. Մեր քաղաքում էլ տաւարի ժանտախտ երեւաց։ Առաջին անգամ մի քանի՝ արդէն հիւանդացած՝ կովեր ստակերին մայիսի 13-ին։ Այստեան գիւղից հրաւիրված անասնաբույժ տեսնելով, որ ժանտախտ է սկսվել քաղաքում գտնվող տաւարի մէջ՝ երէկ սկսեց հետազոտել տաւարները եւ այսօր արդէն մօտ 20՝ գլուխ վարակված կովեր առանձնացրեց սպանելու համար։ Քաղաքում մօտ 300 հատ կով կայ՝ չը հաշւած հորթներն ու երինջները։ Եւ քաղաքային դպրոցի ֆերմայի 88 գլուխ տաւարը։ Որովհետեւ քաղաքը սերտ յարաբերութիւն ունի գաւառի բոլոր տեղերի հետ, մեծ երկիւղ կայ, թէ ժանտախտը կարող է տարածվել ամբողջ գաւառում։ Այդ պատճառով խիստ արգելված է գիւղացիներին եզները լծած սայլերով քաղաք գալ։ Այդ հանգամանքը մեծ դժուարութեան մէջ է դրել թէ քաղաքը եւ թէ գիւղացիներին։ Եռանդուն միջոցներ են ձեռք առնված, եւ յոյս կայ, որ հիւանդութեանը չուտով վերջ դրվի։ Այստեան գիւղում ժանտախտը դեռ չարունակվում է։ մի քանի օր առաջ յայտնի էր, որ 100—120 գլուխ տաւար է սպանվել այնտեղ։ մի խումբ կովեր էլ այսօր պէտք է սպանվէին։ Հիւանդութիւնը այդ գիւղում տարածվել է Ալեքսանդրօպոլի Բէֆի գիւղից բերած տաւարից։

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսին 12-ի գիւղեր անկայտ չարագործներ մտել էին երկրորդ կարգի վաճառական եղբ. Պարսամբաններին մանուֆակտուրային մագաղին եւ տաւրի։ Պարսամբանների ասելով, մօտ երկու հազար րուբլու արժողութեամբ զանազան ապրանքներ։

ԱՆԱԼՔԱՒԱՔԻՑ մեզ գրում են. «Մայիսի 11-ին, քաղաքային ձմերկային ակունքի դահլիճում, տեղի ունեցաւ յօգուտ քաղաքային չորեքդասեան ուսումնարանի չքաւոր աշակերտների մի խումբ ներկայացում երեք վոլըրվիով (հայերէն, վրացերէն եւ ռուսերէն)։ Հայ սիրողները խաղացին «200,000» կատակերգութիւնը, վրացիք՝ «Մալեք» (МАЛЕК) դրամայի 3-րդ արարուածը, իսկ ռուսները՝ «ВЕСЬ ДОМЪ ВЪВЕРХЪ ДНОМЪ» կատակերգութիւնը։ Ներկայացումից վերջը տեղի ունեցաւ կոնցերտ, երգեցին խմբապետ պ. Տէր-Կարապետեանի կազմած քառամայն խումբը եւ ուրիշ ռուս երգիչներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս յայտնի է հետազոտիչներից, Վարդէկ-Բուսոյի Հավրում եղած ժամանակի ամբարխի միջին նրա վրա նետվեց մի նարինջ, որ գիպաւ առաջին միւստորի ամուսնուն։ Ահա թէ ինչ են հաղորդում ֆրանսիական լրագիրները այդ մասին։ Անցեալ իրաւի Վարդէկ-Բուսո հասաւ Հավր «R&E» չորհրդակցութեամբ յոյսով։ Եւ ամբողջի մօտ հաւաքվել էին մօտ 100 հոգի հետաքրքրվողներ, որոնք յարգանքով ողջունեցին միւստոր-նախագահին Վարդէկ-Բուսո նստեց բայց կառք իր ամուսնու եւ քարտուղարի հետ միասին։ Հէնց որ կառքը շարժվեց, նրա մօտ վազեց մի 20 տարեկան երիտասարդ կանաչակերպ։ «Դուք կայառնված էք. այժմ ձեզ Լուրէի փոխարէն», եւ մեծ ուժով նետեց դէպի միւստոր-նախագահ մի նարինջ, որ ուժգնութեամբ զիպաւ տրկին Վարդէկ-Բուսոյի այտին։ Դրանից յետոյ նա սկսեց փախչել, բայց մի ոտարկան հասաւ նրա ետեւից եւ ընկեց յանցաւորին։ Ոստիկանական տան մէջ նա յայտնեց, որ իր անունը Էրնստ Պարֆէ է եւ որ ինքը բանուոր է։ Այն հարցին, թէ ինչու համար նա կամենում էր վերադառնալ Վարդէկ-Բուսոյին, Պարֆէ պատասխանեց. «Ես հայրենասէր եմ, իսկ նա—ոչ», եւ հրաժարվեց աւելի ընդարձակ բացատրութիւններ տալուց։ Պարֆէ պատկանում է նայիրօնախնամական երիտասարդութեան խումբին։ Նա ուղարկվեց բանու

—Մայիսի 13-ին Լիճում բացվեց ֆրանսիական սօցիալիստական կազմակերպութիւնների երրորդ համաժողովը, որին մասնակցում են ներկայացուցիչներ բանուորական կուսակցութեան բոլոր խմբերի եւ չկուսակցի կողմից։ Համաժողովի գլխաւոր նպատակն է բանուորական կուսակցութեան սերտ միացման եւ գործունեութեան միատեսակ ծրագիր մշակելու հարցը։ Վիճարանութիւնների ցուցակի հէնց սկզբում դրված է «Միլիտանտ հարցը», այսինքն այն հարցը, թէ կարող է արդեօք սօցիալիստ մասնակցութիւն ունենալ բուրժուազական միւստորութեան մէջ։ Այս հարցը դարձեւ լուրջ հէնց առաջին նիստում եւ տեղից տեղեց տաք վիճարանութիւնների, որոնց մասնակցեցին Վալեան, Ժորէս, Վիլիամի, Բրիան, Գրոսսէ եւ ուրիշները։ Վիճարանութիւնների շարունակութիւնը յետագայից մինչեւ հետեւեալ նիստը։

—«Hamburg. Nachr.» քննադատում է Գերմանիայի փոքր աւիական քաղաքականութիւնը եւ յատկապէս յայտնում, որ այդ հարցում Գերմանիան, ըստ երեւոյթանի, չեղում է Բիսմարկի սկզբունքից՝ Միջերկրականի ափերում շահեր չորոնելու, եւ, ընդհակառակը, վերջին ժամանակ նա ամենայն եռանդով աշխատում է, որպէս հնար, աւելի մեծ կշիռ եւ հեղինակութիւն ձեռք բերել ինչպէս Բոսֆորի ափերում, այնպէս էլ Փոքր-Ասիայում։ «Գ. Պոլսի գերմանական դեսպանը,—ասում է Համբուրգի լրագիրը,— ոչ մի դէպք ձեռքից բաց չէ թողնում ճնշումը գործ դնելու սուլթանի վրա եւ Բերլինի քաղաքական շրջաններում, ըստ երեւոյթանի, նայում են Փոքր-Ասիայի վրա, որպէս մի այնպիսի երկրի, որ որոշ հանգամանքներում աւելի մեծ նշանակութիւն ունի, քան Գերմանիայի միւս բոլոր արտաքին տիրապետութիւններն ու ձեռնարկութիւնները։ Բայց մեր տեսակէտից այդ տեսակ քաղաքականութիւնը վտանգաւոր է ոչ միայն նրա համար, որ նա զգնում է սխալ հիմունքներից, այլ զիստաւարապէս նրա համար, որ նա զիպաւ է Ռուսաստանի ամենաազգայուն տեղին եւ զրգուտ է նրա անվտանգութիւնը դէպի Գերմանիան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

22 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այստեղ հասաւ Հիւսիսային ամերիկական նահանգների Ինդիանա շտաբի սենատոր Բէնթլի, որին կայարանում դիմաւորեց Պետերբուրգի հիւսիս-ամերիկական դեսպանը։

ՄՈՍԿՎԱ։ Մարինայեա Բօչայուով գտնվող Պոլեակովի տանը պատահած հրդեհի ժամանակ յայրկերին 5 եւ ծանր այրվածքներ ստացան 9 մարդիկ։

ԿԱԼԻՇ։ Ցանքների դրութիւնը, որ լաւ չէր ձմերկային սաստերի պատճառով, աւելի եւս վատացաւ երաշտից։

ԿԱԼՈՒԳԱ։ Աշնանայնայնների եւ խոտերի դրութիւնը վրայագոյցի է. գարնանայնայնը վերջանալու վրա է։ Եղանակը ջերմ է. երբեմնապէս գալիս են անձրեւներ։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Գերմանիան, Անգլիան եւ Ֆրանսիան միակ պետութիւնները կը լինեն, որոնք բերդապահ գործեր կը թողնեն Պեկինը ծովի հետ միացնող կէտերում, որովհետեւ Ամերիկան հրաժարվեց հրամանագրելու իր զորքերին յանձն առնել այդ ծառայութիւնը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Կօնկէր դեսպանը Սան-Ֆրանցիսկոյից ուղեւորվում է Չինաստան։ Բօկիլ չար կարճ ժամանակից յետոյ կը մեկնի Պէկինից։ «New-York Herald»-ի ասելով, սենատոր Գաննա մի ժուրնալիստի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ յայտնեց, թէ այն տեղեկութիւնը, որ մօտ օրերում Մօնթեալում հաղորդեց ֆրանսիական նախկին միւստոր-ծով Ձիգֆորդ, թէ իւր Մակ-Կինլէյը անձամբ ասել է նրան, որ ինքը զաղարկել է պրօտէկցիօնիստ լինելուց, հիմնված է թիւրիմացութեան վրա։ Մակ-Կինլէյը այժմ էլ, ինչպէս եւ առաջ, պրօտէկցիօնիստ է։

ՉՈՆԳԿՈՆԳ։ Ֆրանսիացիները մտադիր են յուլիս ամսից Լիպցիցիկ Ֆրանսիային խաղալ։ ԼՈՆԴՈՆ։ Լիպցիցիկ հաղորդում են, թէ Ծօրկիլիֆի մօտ գտնվող զորքերի բանակում, զինուորների մէջ, ապստամբութիւն ծագեց. բանը հասաւ ընդհարման ապստամբների եւ այն զինուորների մէջ, որոնց հրաման էր տրւած վերանայնելի կարգը։ Ապստամբած զինուորները մի քանի անգամ հրացան արձակեցին կարգ վերականգնողների վրա եւ ապա սկսեցին կուել սուրհմներով, որպէս զի թոյլ չը տան իրանց ձեռքաւորելու։ Երկու մարդ հաւատարիմ զինուորներից ծանր վէրքեր ստացան սուրհմներով։ Կալանաւորված են Դուբլինի տասն հրացանաձիգներ։

ՄԱԴՐԻԴ։ Սենատի կազմը, նրա մէջ հաշուելու եւ անփոփոխ սենատորներին, հետեւեալն է.—ազատամիտներ—163, պահպանողականներ—112, տէտուախոսներ—24, անկախներ—10, անկախ ազատամիտներ—4, գամադօնիստներ—7, ղէմօկրատներ—3, կարլիստներ—2, րօմէրիստներ—2, հանրապետականներ—2, աղաքային միութեան անդամներ—2 եւ որոշ ուղղութիւն չունեցողներ, այն է եպիսկոպոսներ—18, ազատ տեղեր—11։

ՎԻԷՆՆԱ։ Ունգարական պատգամաւորութեան մասնաժողովը, որ զբաղվում է արտաքին գործերով, ընդունեց արտաքին գործերի միւստորութեան զեկուցումն եւ քիւլէտը եւ մի եւ նոյն ժամանակ ջերմ երախտագիտութիւն եւ վստահութիւն յայտնեց միւստորին։ Զեկուցման մէջ հաւատարմացվում է, որ երեք պետեան դաշնակցութիւնը պահպանում է իր դրութիւնը անխախտ եւ, հակառակ մի քանի աղբիւրներից տարածված լուրերի, ամենեւին ցնցումների չէ ենթարկվում։ Յարաբերութիւնները Ռուսաստանի հետ անուանված են կարեւոր եւ օգտակար լրացումն երեքպետեան դաշնակցութեան. նրանք շատ անգամ բարեբար աղբիւրներն են գործել, մասնաւոր Ռուսիայի հետ։ Սօֆիայի մէջ տեղի ունեցող տարածայնութեան մէջ։ Սերբիական գործերի մասին խօսելով, զեկուցումը չէ համաձայնվում այն մտքի հետ, որ դաշնակցութեամբ իրար հետ սերտ կապված երկու պետութիւններ մի եւ նոյն ժամանակ կարող են իրար դէմ անուսական կուել մղել։

ԼՈՐԴՈՆ։ Կիւլիցիներ հեռագրում է. «Պարզվեց, որ միակֆօնաէնի մօտ տեղի ունեցած կուի ժամանակ սպանված են էլի երկու օֆիցէր եւ մէկն էլ անյայտ կորել է»։

ԿԱՊԵՏՆԱՊՈՆ։ Բազուտօսների երկրում մեծ շարժումն է նկատվում, որովհետեւ այնտեղ կիւլիցիների ժանտախտ է երեւացել։ Ամենախիստ միջոցներ են ձեռնարկված, որ հիւանդութիւնը չանցնի հարեւան չրջանները։

ԻՕԿՈՂԱՄԱ։ Կատուրա միւստորութիւն կազմեց.—Սօննէ—Արօտուկէ ժամանակաւորապէս իր վրա վերցրեց արտաքին գործերի միւստոր պաշտօնը, Կիւրա-Կէյչօ նշանակված է արտաքաղաքական միւստոր, Կիլիւշա—ժողովրդական լուսաւորութեան, Ուրախա—Տօսկէ—երկրագործութեան, Ուստումի—Տաղակաղաւ—ներքին գործերի, Վիկոնտ Իօշիկալա—հաղորդակցութեան ճանապարհների, Զինուորական միւստոր միւսն է գնեւրալ Կօզաւա, ծովային միւստոր—ծովապետ Եամաւ մօտէ։

ՊԵԿԻՆ։ Դաշնակցի գնեւրալների ժողովը որոշեց յուլիս ամիս ընթացքում հետզհետէ քաղաքի վարչութիւնը յանձնել մանդարիններին։ Այս շարաթ իւրաքանչիւր օր կը գնան դէպի Տակու երկու գնացքներ յատկապէս զորքեր տեղափոխելու համար։

ԿԱՊԵՏՆԱՊՈՆ։ Հաստատված է, որ մինչեւ հիմա տեղի են ունեցել ժանտախտից հիւանդանալու 684 դէպքեր, որոնցից 318-ը վերջացել են մահով։

ՏԵՆՆՁԻՆ։ Կիրակի երեկոյեան, Տակուի ճանապարհի վրա, տեղի ունեցան լուրջ ընդհարումներ. ուղեւորներ հրացանաձիգների անգլիական զինքի զինուորները, որոնց յանձնված է ոստիկանութեան ծառայութիւնը, թոյլ չը տուին ֆրանսիական զինուորներին ընդհարման մի տուճ. նրանք ուղղեցին դէպի անգլիացիներ իրանց սուրհմները եւ սկսեցին քարկոծել նրանց. պաշտպանվելիս անգլիացիները հրացանները արձակեցին օդի մէջ, եւ այս պատճառով գերմանացիները օգնութեան եկան ֆրանսիացիներին. այսպիսով ընդամենը հաւաքվեցին 200 մարդիկ։ Վերջապէս անգլիացիներից հինգ հոգի կրակ բացին եւ սպանեցին մի ֆրանսիացու ու վիրաւորեցին երեքը։ Հինգ գերմանացի, չորս անգլիացի եւ մի եւսականացի թիթեւ վէրքեր ստացան։ Ընդհարմանը վերջ դրվեց այն ժամանակ, երբ վրա հասաւ մի գերմանացի օֆիցէր զօրեղ զորաւարների հետ միասին։

ՍԻՂԵՆՅԵ։ Կօրնվալիսեան դգսի ծննդեան տօնի պատճառով նաւերը ողջոյնի թնայնօթաձգութիւն կատարեցին. այդ նաւերի մէջ էր եւ ռուսական «ГРОМОБОЙ» չըջնաւը, որ միակ օտարերկրեայ զինուորական նաւն է այստեղ։ Դքսական զոյգը մի քանի անգամ երախտագիտական զգայմունքներ յայտնեց ռուսաց կայսերական նաւատօղի այս գեղեցիկ ներկայացուցչի ներկայութեան համար։ Նրա նաւապետը, կապիտան Իւստէն, աչքը ընկնող դեր էր կատարում այստեղի բոլոր հանդէսների ժամանակ։ Դքսական զոյգը մասնաւոր կերպով այցելեց նաւը։

ՊԱՐԻՉ, Պատգամաւորները ժողովի Զինա-
կան հարցը քննադատելու ժամանակ Դէտե-
րէլ ասում է, թէ ամերիկացիները այլ եւս
չեն թագնաւում, որ մատաղութիւն ունեն տի-
րանաւ եւրոպական գաղթականութիւններին,
այս պատճառով ամերիկական երկրի վրէժ-
մեծ է, քան զեղիւնը սպասվածը: Ապա
ճառախօսը հարցնում է, թէ երբ կը վերա-
դառնան զօրքերը Զինաստանից: Դէտե-
րէլ ասում է, թէ նրանց մի մասը ար-
դէն ճանապարհին է եւ վերադառնում է հայ-
րենիք, իսկ մնացածները վերադարձը կախված
է չինական հարցի վերջնական լուծումից, որի
դժուարութիւնները կայանում են վարձատրու-
թեան վճարման մէջ: Ինքը, մինիստրը, կը դե-
րադասէր առեւտրական երաշխաւորութիւն-
ներ, որոնց չնորհիւ բոլոր պետութիւնները
չհազարգացած կը լինէին Զինաստանի ամբող-
ջութիւնը պահպանելու գործի մէջ: Զինական
մաքաւարների աւելացումը կը ծանրանար
միմիայն չինացիների վրա: Գաղափարը վեր-
ջացրեց իր ճառը երաշխաւորութիւն յայտ-
նելով զօրքերի վարձուքի առիթով Զինաս-
տանում:

Պէտիւն: Վարդապետը այսօր ճանապարհ ըն-
կաւ այստեղից: Նրա հետնալը առիթ տուեց
գլխավոր պետութիւնների այստեղ գտնվող
զօրքերի մեծ զորանախնդին, արտիլերիան ող-
ջոյնի թնգանութեամբ թիւն սկսեց, երաժշտական
խմբերը նուագում էին: Ամբողջ դիպլոմատիա-
կան մարմինը հաւաքվեց կայարանում ֆէլդ-
մարշալին ճանապարհ պահելու համար: Վարդա-
պետը ուղեւորվում է Տակուի վրայով դէպի Կո-
բէ: Փոխ-գնդապետ Բառնի առաջմ մնում է
այստեղ, որպէս զի վերջը ուղեկցէ Բերլին չի-
նական պրինցին, որը պէտք է կայսրի անու-
նից ցաւակցութիւն յայտնէ գերմանական դե-
պանի սպանութեան առիթով: Դեպքաները
ներկայումս քննում են այն հարցը, թէ որքան
տարբեր ժամանակամիջոց կարելի կը լինի տալ
Զինաստանին պետութիւններին վարձատրու-
թիւնը վճարելու համար:

ԲԻՐԻՍՍԵՆ: Հրատարակված է տրանսվա-
լիան գեապանութիւնից ստացված հաղորդա-
գրութիւնը Պրէտորիայի մօտ տեղի ունեցած
կռու մասին, որի մէջ Բէյեր եւ Բրէյտենբար-
կա զորքերին անգլիացիներին, գերի վերցրին 600
մարդ եւ աւար առան վեց թնգանութիւն: Դե-
պանութեան հաղորդագրութեան մէջ ասված
է. կռիւն տեղի ունեցաւ մայիսի 12-ի եւ 20-ի
միջև: Եւ այդ օրերում ըստ երեւոյթին սաստիկ
պատերազմում էին: Պրէտորիայում պարզ լըս-
վում էին թնգանութեամբ ծախները, մասնա-
ւանդ էլ վարտինգէնից դէպի արեւմուտք, Բու-
տենբերգից դէպի Վատերվալ տանող ճանա-
պարհի վրա եւ դէպի արեւելք Պրէտորիայից
դէպի Կալվինգէլ: Տրանսվալիան հաղորդա-
գրութիւնը պարունակում է մանրամասնութիւ-
ններ միայն Կալվինգէլի մօտ տեղի ունե-
ցած պատերազմի մասին: Նրա մասին ասված
է հետեւեալը. «Հրամանատար Բրէյտենբար-
կա իր զօրքերինը համարեա արդէն յաղթված
էին, երբ մօտեցաւ գնդերալ Բէյեր, անգլիացի-
ները այն ժամանակ յաղթվեցին արդէն յայտ-
նի հանգամանքներում: Ուրիշ կռիւների վե-
րաբերմամբ մենք դեռ եւս մանրամասն աե-
ղկութիւններ չունենք, մենք գիտենք միայն,
որ կռիւն տեղի է ունեցել Զվարտինգէնի
մօտ, ուր բռնկւեց ի փախուստ դարձրին
անգլիացիներին Վատերվալի ուղղութեամբ»:

ԿԱՆԵՑԱ: Պատգամաւորների ժողովը վճռեց
ցանկութիւն յայտնել պետութիւններին՝ կղզին
Յունաստանի հետ միացնելու մասին: Ապա
որոշված է յանձնաժողովը նշանակել կառավար-
չական վարչական միջոցների վրա հակելու հա-
մար:

ԼՈՆԴՈՆ: Հերբերտը են այստեղ տարածված
այն լուրերը, թէ զինւորական մինիստրութիւ-
նը պատերազմական գործողութիւնների բեմից
վերջերս իր ստացած բոլոր տեղեկութիւնները
չէ հրատարակել: Զինւորական մինիստրութիւ-
նը այժմ հաւաստեցնում է, որ այն բոլոր տե-
ղեկութիւնները, որ ստացել է ինքն Կիտան-
բից նորերս տեղի ունեցած կռիւների մասին
Աֆրիկայի հարաւում, ինքն հաղորդել է եւ ի
գիտութիւն ընդհանուրի:

ԿԱՊԵՏԱՒԱՏ: Վիլլուսթը քաղաքը երէկ են-
թարկվեց բռնակալի զօրքերին յարձակմանը,
որ գտնվում էր Շէպարդի հրամանատարութեան
տակ: Բռնկւեց յետ մղվեցին կորցնելով երկու
սպանված եւ երեք վիրաւորված: Բռնկւեցին
մի ուրիշ զօրքաւոր, Ֆուլչի հրամանատարու-
թեամբ, երէկ սպանում էր Զէմետտունին:
ՏԵՆԵՐԻ: Անցեալ գիշեր այստեղ, Տակու-

փողոցում, որ վատ համբաւ ունի, ընդհարում
տեղի ունեցաւ անգլիական ոստիկանական
զինուորների եւ ֆրանսիական զինուորների
մէջ: Վերջինները սուղինքով յարձակու-
մի գործեցին եւ քարկոծեցին անգլիացիներին,
որոնք սկսեցին հրացաններ արձակել: Անգ-
լիացիներին օգնելու համար եկաւ գերմանա-
կան ոստիկանութիւնը: Նրանից յետոյ, երբ
ֆրանսիացիներին օգնութեան հասան եւսպո-
նացիները եւ մի քանի գերմանացի զինուոր-
ներ, սկսվեց կռիւ, որի ժամանակ, լուրերին
նայելով, սպանվեց մի ֆրանսիացի եւ մօտ
տասը զինուորներ էլ վիրաւորվեցին: Առ այ-
ժմ ուրիշ մանրամասնութիւններ յայտնի չեն:
Եւսպոնական ոստիկանական պահակակէտի վրա
նշխարեց տեղի ունեցաւ յարձակում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 21-ին վախճանվեց
պետական խորհրդի անդամ գնդերաւոր-
տանտ Ստիւրլէր:

ԽՈՐԱԿԵՐ՝ ԱՆԷՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԶԱԿ ՄԷԼԻԲ-ԱՆԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՊԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆՈՐ, ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:
ԱՌԱՌՈՑՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՍԱՐԱՐԿԵԱՆ—11—12 ժ. վրաբերու-
թեան, վերնական (սիֆիլիս) և միզառեւ. հիւանդ.

Գ. Մ. ՉԻՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և
ներարգային:

Կ. Բ. ԳԵՂԻՍԻՎ—12—1 ժ. ակունքի, քթի և կո-
կորդի:

Զ. Բ. ԲԱՐԱՆԱՍԵԱՆԻ—11—12 ժ. կանանց և երե-
կայաց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ—1—1½ ժ. ներքին և երե-
կայաց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. ՌԱՍՏԱՐԵՎԻՍԻ—6—7 ժ. վրաբերութեան և
մորթու:

Գ. Ա. ԹԱՐԽԱՆՈՎ—7—8 ժ. ներքին և երե-
կայաց: Ծաղիկ և կորուստ նոյնպէս և կիրակի, առա-
ւօտեան ժամի 9—10.

Բ. Ա. ՆԱՍԱՐԱՐԿԵԱՆ—7½—8 ժ.
Վար 50 կ. չքաւորները ձրի համախորհրդի (կոն-
սիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՆԱԿԻՍԱՅԻ—տանը. ծաղկահատ և բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաւտեստ:
ԲՈՅԱԿԱՆ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ՎԱՃԱՐՎՈՒՄ ԵՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ, ԱՐԻՍՏ. ԱՐՔ. ՍԵՂ-
ԲԱԿԵԱՆԻ, Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, Պ. ԱՂԱՄԵԱՆ-
ՆԻ ԵՎ ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ:

Մ Ե Ժ Ա Ղ Ի Ր Վ Մ Ս Կ Ե Ր Ն Ե Ր Ը
Իւրաքանչիւր օրինակը 50 կ.

Դիմել՝ Թիֆլիս. Կնիշնի մագազին
„ԴՄԵՆԵՐԳԷ“ Լորիս-Մելնիկովսկայ, № 11,
Գալստյ, Գալստյան.

1—3

Թախանձագին խնդրում եմ Ռուսաստանի
եւ արտասահմանի հայրերին ուս յայտնի
է Ալեքսանդրօպօլից արդէն մի տարի անշայտ
հետաքննելու Արշակ Հաջիրաբեանի կարա-
պետեանից բնակութեան տեղը կամ ով
նրա մասին որ եւ տեղեկութիւն ունի՝ յայտ-
նէ հետեւեալ հասցեով.

Թիֆլիս, Կնիշնի «Մաք», Արշալույս
Մխարիանց.

3—12 Յարուստի Կարապետեանց

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով արտասահմանից՝ ընդունում
է բերանի եւ աւանիների հիւանդութիւններ ու-
նեցողներին: Շինում է արուեստական աւաններ,
քիթի, քիւք (օպտուրատոր) եւ վերին ու ստորին
անդամատուած ծնօտների պրոթէզներ (про-
тезы):

Առաւօտեան 8—2 ժամը
Երեկոյեան 5—8 ժ

Հասցէ՝ ՄԱՍԿԻՆՍԿԱՅԱ ՎՈՒ, № 16, ՆԱԶԴ ՄԱԳԱԶԻ-
ՆՈՄՔ ՄԱԴԻՆՈՎԱ.

18—25

ԲՈՂԱԿԱՆ ԿԱՐԵՆՏ

Յ. Յ. ՂԱԿԻԷԼԵԱՆԻ

Ընդունում է վնասական, արտական, մորթու
եւ ներքին հիւանդութիւն ունեցողներին:

Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—8 ժամը.

Միխայիլօպօլսկայ եւ Նէմեցկայա փողոցների
անկիւն, տուն Սիլվիկոյ, մուտքը Նէմեցկայա
փողոցից:

25—25

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ամսիս 16-ին մեկնում է կովկասեան հան-
քային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս,
կընդունէ հիւանդներին:

Հասցէ՝ ՊԱՏԻՂՈՐՔՔ, ՎԵՐԽՆԻՅ ԲՈՒԼՎԱՐՔ,
Դ. ԿԱՐՊՈՎՈՅ.

7—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նա վարձով է տա-
լիս Բօրժօմում կահաւորված երկարիւնի ա-
մառանոց նախկին ՇԱ. Ս. Արշալույսի, այժմ
Թիֆլիս քաղաքի պատկանող, 5 սենեակով
ներքին յարկում եւ 4 սենեակով վերին յար-
կում, ամեն պատկանելիքներով: Պայմանների
մասին հարցնել Գաղաքային Վարչութեան 4-րդ
բաժանմունքում:

3—3

Լ Ո Յ Ս Ե Ս Ա Ն
Բ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

„ԲԺՇԿԻ ԶՐՈՑՑՆԵՐԻ“ № 2

1) „Վ Ա Տ Յ Ա Ր“

8 ն կ ա ռ ո Վ
Գինն է 6 կօպ.

2) «ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ» Գինն է 75 կ.

Մախվում է Թիֆլիսի ու գաւառների գը-
րաւիճաւանոցներում եւ հեղինակի մօտ:

Պարսկաստանից դիմելու են Թ ա Ր Ի զ
ըօկոթը Փայապանին:

Մինչեւ սեպտեմբեր դիմել՝ ЛЕВОНУ МЕ-
ЛНЧЕ-АДЖАНЫ, редакция «Мурч».

5—10

Կիրակի, մայիսի 27-ին

Մ Ո Ւ Շ Տ Ա Յ Ի Դ Ա Յ Գ Ո Ւ Մ

Թիֆլիսի Հայունեաց Բարեգործ. Ընկերութեան օգուին

տեղի կունենայ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

Երաժշտութեամբ, երգչների մասնակցութեամբ, կօնֆետով, ընծաներով եւ այլն:

Զբօսանքի սկիզբն է ժամը 3-ին կէսօրից յետոյ: Մուտքի գինը՝ 20 կօպ: Երեկոյեան 10 կօ:
(մ. 22, 24, 26, 27)

2—4

ՄԱՍՆԱՌՈՐ ՊՐՕԳՐԱՄԱՋԻՍ

Յ Ա Կ. Թ Ա Գ Է Ո Ս Ե Ա Ն Յ Ի

(Բազու, Թաթօսօվսկայա փողոց)

Մայիսի 15-ից մինչեւ 28-ը կը լինի նոր մանող աշակերտների ընտելութեան փոքր պատ-
րաստական, մեծ պատրաստական եւ Ի դասարանները եկող 1901/02 ուսումնական տարվայ
համար: Նախապատրաստական դասարանը ընդունվում են անգրագէտները առանց ընտելութեան
Յունիսի 1-ից պրօգրիմալայի պահանջը տեղափոխվում է սեփական ամարանոց Սազա-
րէջօ գիւղը, Թիֆլիսի գաւառում:

2—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նրա ատենում, ներկայ 1901 թ.ի մայիսի 24-ին, ցերեկվայ 12
ժամին, տեղի կունենայ աճուրդ կապալով տալու քաղաքային մի հողաբաժին Թիֆլիսի 7-րդ
քաղաքամասում, որ գտնվում է Հաւաքարի տափում, 23 դեմիտրի տարածութեամբ, բա-
ցառապէս գաղ պատրաստելու համար: Ծանկացողները կարող են տեսնել պայմանները Վար-
չութեան 4-րդ բաժնում բոլոր լի օրերը, ցերեկվայ 9-ից մինչեւ 3 ժամը: Աճուրդի ժամանակ
պէտք է ներկայացնել 100 ռուբլի գրաւական:

3—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ն
1 Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵԱՆՈՒՄ

Հատոր առաջին:—XVI—XVII դար

Գինն է 1 ՐՈՒՐԼԻ 50 ԿՈՊԷԿ

Մախվում է Թիֆլիսում, «Մշակ» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Թիֆլիս, Կնիշնի «Մաք».

2—10

Կ Օ Ն Ֆ Է Կ Մ Ի Ե Ղ Օ Կ Օ Ղ Վ Ի Գ Ո Ր Ժ Մ Ր Ա Ն

Փ. Ն. ՓՐԻԳՈՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամեն տեսակ ար-
տադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով
մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:

Պատրաստում են՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (с начинкой),
մարմէլադ (мармелад), զեֆիր (зефир), դրաժե (драже), քրիվա-չաքար (чупчик-чупчик),
Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մաքրաքաղաքից հրաւիրված յայտնի
վարպետի հսկողութեան տակ:

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:
Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի:
Պատուէրների համար դիմել՝ Թիֆլիս, Նախալովա, Պավլովսկայա, собств. домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիննե-
րում—Գ. Բայն անգլո-երանի, Գ. Ս. Տէր-Սիմօն Եւանի, Զ. Ի. Սոլովյան Եւանի,
Զ. Պ. Պօպօվի, ՆՂԸ. Ս. Ի. Արապաճապետի, Հաջիրաբեանի, Հաջիրաբեանի, Հաջիրաբեանի,
պարսկական մագազինում, Պ ե ա Ր Օ Ի Խալալիան մագազինում եւ այլն: Տեղեկութեան համար:
24—100